ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-00-70,
Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

թիվ 819-18
17 դեկտեմբերի, 2018թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ Ա. Ղուկասյանին

Հարգելի՝ պարոն Ղուկասյան,

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 2018 թվականի N 213-215 որոշումները:

Առդիր՝ 5 էջ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Ն. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2018 թվականի, N 213-Ա

2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) 2017 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 2-Ն որոշման՝

որոշում եմ.

1. 2018 թվականի դեկտեմբերի 14-ին ժամը 16:00-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի վարչական շենքում՝ համայնքի ղեկավարի աշխատասենյակում, գումարել ավագանու արտահերթ դռնբաց նիստ:

2. 2018 թվականի դեկտեմբերի 14-ին կայանալիք ավագանու արտահերթ նիստի օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերի որոշման նախագծերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., դեկտեմբերի 11,
«Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի
2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 213-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ,
(*զեկուցող՝ Ա. Տիտանյան, Ն. Տիտանյան*)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
(*զեկուցող՝ Ա. Տիտանյան, Ն. Տիտանյան*)

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
(*զեկուցող՝ Ա. Տիտանյան, Ն. Տիտանյան*)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
(*զեկուցող՝ Վ. Ձավարյան, Ն. Տիտանյան*)

5. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
(*զեկուցող՝ Ա. Տիտանյան*)

6. «ՀՈՐԻԶՈՆ-95» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ Մ-6 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԱՎԵԼՈՐԴ ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ԹԱՓՈՆԱԿՈՒՅՏԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՅԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
(*զեկուցող՝ Հ. Գալստյան*)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբերի 2018 թվականի, N 214-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՂԱՐԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-078-0020-0003 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,15326 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, 06-078-0111-0080, 06-078-0117-0022 ԵՎ 06-078-0107-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՅՈՄ ԱՐԾՐՈՒՆԻ ԱՆՏԱՇՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻ

Համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 56-րդ, 57-րդ 59-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածների, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմնբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

որոշում եմ.

հիմք ընդունելով քաղաքացի Արտյոմ Անտաշյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումը, հողամասի, բնակելի տան և վարելահողերի հատակագծերը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Մղարթ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-078-0020-0003 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.15326 հեկտար մակերեսով, բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված, փաստացի առկա սահմանազատված հողամասի և հողամասում գտնվող՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը օրինական կառուցված (կառուցվել է 1960 թվականին) և 19.07.2008 թվականի դրությամբ առկա, 163,8 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, օժանդակ շինությունները (այսուհետ նաև՝ անշարժ գույք), օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձ՝ Արտյոմ Արծրունի Անտաշյանի՝ ծնված 17.08.1981թ. սեփականությունը:

2. 06-078-0111-0080 ծածկագրով 0,09689 հեկտար մակերեսով, 06-078-0117-0022 ծածկագրով 0,47031 հեկտար մակերեսով և և 06-078-0107-0009 ծածկագրով 0,22693 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերը (այսուհետ նույնպես՝ անշարժ գույք), օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձ՝ Արտյոմ Արծրունի Անտաշյանի՝ ծնված 17.08.1981թ. սեփականությունը:

3. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից՝ 06-078-0020-0003 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.15326 հեկտար մակերեսով հողամասին և հողամասում առկա բնակելի տանը տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնք, գյուղ Մղարթ փողոց 8, թիվ 15 փոստային հասցեն:

4. Անշարժ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պայմանները, ինչպես նաև կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

5. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

6. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., դեկտեմբերի 14,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբերի 2018 թվականի, N 215-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 205-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասին 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի, Արդվի բնակավայրի կադաստրային քարտեզի 06-017-0006-0003 ծածկագրով 0.42559 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի եվ բնակելի տան նկատմամբ քաղաքացի Լարիսա Սարգսի Վերանյանի հողհատկացման հիմքերը վերականգնելու եվ սեփականության իրավունքը ճանաչելու մասին» N 205-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., դեկտեմբերի 14,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն